



**Գայանե Վարդանյան,
հասարակագիտության ուսուցչուհի
Բանասիրական գիտությունների թեկնածու**

**- Ողջույն: Հասարական գիտությունների ամբիոնը և մենք
կազմակերպել ենք ամանորյա հարցում: Կներկայանա՞ք:**

-Ողջույն: Ես Գայանե Վարդանյանն եմ: Դասավանդում եմ
հասարակագիտություն:

-Ո՞րտեղ եք սովորել:

-Երևանի պետական համալսարանում:

-Իսկ քա՞նի տարի է, որ աշխատում եք:

-Ավելի քան 20 տարի, իսկ ճեմարանում՝ 7 տարի:

-Ո՞րն է եղել 2017 թվականի Ձեր ամենահիշարժան պահը:

-Հիշարժան պահերը բավականին շատ էին: Քանի որ ես շատ եմ
սիրում ճանապարհորդել, իմ ամենահիշարժան պահը կհամարեմ իմ
հերթական այցելությունը Եվրոպա, հատկապես աշխարհահռչակ
թանգարաններ:

-Ի՞նչ կհիշեք ամանորյա հուշերից:

-Ամանորյա հուշերից կարող եմ առնձնացնել բարձիս տակ Ձմեռ
պապի դրած նվերները: Նվերները, որպես կանոն, քաղցրավենիք էին
լինում, խորհրդային վաճիկներ, մանդարին:

-Իսկ ի՞նչ կցանկանաք հաջորդ տարի:

-Կցանկանամ, որ իմ երկրում վերջնականապես խաղաղությունը գա
ու չգնա, որ սահմանին խաղաղություն լինի, և ոչ մի զինվոր չզոհվի:

-Իսկ ի՞նչ կցանկանաք ճեմարանականներին:

-Ճեմարանականներին կցանկանամ ուսման մեջ հաջողություններ,
բարգավաճում:

-Շնորհակալություն հարցազրույցին մասնակցելու համար:

-Խնդրեմ:

